

## 12-16-րդ դարերի հայերեն վիճակի արձանագրությունների գոյականների որոշ իմաստային խմբեր

*Չոփուրյան Գայանե*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-41>

*Հանգուցային բառեր. անձնանուն, տոհմանուն, տեղանուն, ուղեկցող բառեր, հաճախականություն, մասնակադասարար*

### Նախաբան

Վիճակի բնագրերը հայոց լեզվի պատմության կարևոր, անփոխարինելի աղբյուրներ են, առանց որոնց դժվար է պատկերացնել միջին հայերենի և բարբառների նախնական փուլերի վիճակը, առավել ևս՝ նրանց ուսումնասիրության տարածամասնակա քննությունը: Սակայն արձանագրված լեզվական փաստերը դեռևս ամբողջությամբ լեզվաբանական քննության չեն ենթարկվել՝ պայմանավորված դրանց ավելի ուշ հրատարակությամբ: Վերջիններիս թվին է դասվում 12-16-րդ դդ. հայերեն վիճակի արձանագրությունների (այսուհետ՝ Արձանագրություն) բառապաշարը, որն առայսօր կարոտ է համակողմանի քննության, որով էլ պայմանավորված է մեր աշխատանքի արդիականությունը:

Արձանագրություններում գերակշռում են նյութական խոսքի մասերը, մասնավորապես՝ գոյականները: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ սույն աշխատանքում անդրադարձել ենք Արձանագրություններում հիշատակված գոյականների առավել հաճախադեպ իմաստային խմբերի՝ անձնանունների, դրանց ուղեկցող բառերի և տոհմանունների, տեղանունների, տոհմանունների, դրանց կիրառության հանգամանքների, կազմության և արտահայտության առանձնահատկություններին:

Ուսումնասիրությունը կատարել ենք նկարագրական, վերլուծական և վիճակագրական մեթոդներով:

Արձանագրություններն ունեն հստակ կառուցվածք. սովորաբար առաջին հատվածում պատվիրատուն (հեղինակը) ներկայացնում է իրեն՝ հաճախ հիշատակելով նաև ընտանիքի անդամների, հարազատների անունները և նրանց առնչվող տվյալները: Հաջորդիվ ներկայացվում է բուն բովանդակությունը, ապա արձանագրությունն ավարտվում է անեծքագրերով կամ օրհնանք-աղաչանքներով:

Արձանագրությունների բառապաշարը բազմաշերտ է, որը պայմանավորված է դրանց տարաբնույթ թվանդակությամբ: Առավել հարուստ և բազմաբովանդակ արձանագրություններ պահպանվել են տաճարների, եկեղեցական շինությունների պատերին: Դրանք մեծ մասամբ պաշտոնական վավերագրեր են հուշարձանի կառուցման, հավատացյալների նվիրատվությունների, վանքին շնորհված արտոնությունների, գանազան գործարքների օրհնականացումների, պայմանագրերի և այլնի մասին:

Արձանագրությունների բառապաշարը թույլ է տալիս պատկերացում կազմել նաև միջնադարյան Հայաստանում տարածված սովորույթների ու հավատալիքների, կրոնական պատկերացումների մասին, ինչպես նաև՝ հետևել լեզվի պատմական զարգացման ընթացքին, հնչյունական և քերականական համակարգերի փոփոխություններին:

Աշխատանքը հնարավորինս համակարգված ներկայացնելու համար նպատակահարմար ենք համարել Արձանագրությունների բառապաշարն ուսումնասիրել ըստ խոսքիմասային պատկանելության, սակայն հաշվի առնելով հոդվածի սահմանափակ ծավալը՝ ստորև կանդրադառնանք միայն գոյականների որոշ իմաստային խմբերի՝ մասնավորապես քննելով

1. անձնանունները, դրանց հետ գործածվող ուղեկցող բառերն ու տոհմանունները, որոնց թվում նաև՝ վերծանողների կողմից առանձնացված նորահայտ բառերը,
2. տեղանունները, որոնց թվում նաև՝ այգիների, հողատարածքների, հանդամասերի և այլ անուններ,
3. տոնանունները:

Կքննվեն նաև վերոհիշյալ բառախմբերի կիրառության հանգամանքներն ու գործածության հաճախականությունը, ինչպես նաև՝ արտահայտության առանձնահատկությունները:

Նշված իմաստային խմբերում ընդգրկված բառերի հնչյունական տարբերակները քննության չենք ենթարկի, քանի որ դրանց կաղապարային արտահայտությունները ներկայացրել ենք այլ հոդվածում:

Ստորև առանձին-առանձին կանոնադառնանք վերոնշյալ իմաստային խմբերի գոյականներին:

### **1. Անձնանունները, դրանց հետ գործածվող ուղեկցող բառերը և տոհմանունները Արձանագրություններում**

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արձանագրություններում անձնանունները առավել հաճախ կիրառվել են ուղեկցող բառերի հետ, քան միայնակ, մինչդեռ տոհմանունները, որոնք հանդես են եկել անձնանունների փոխարեն կամ նրանց կից կիրառությամբ, այդքան էլ հաճախադեպ չեն:

Արձանագրություններում անձնանունները վկայվել են տարբեր առիթներով՝ հիշատակվելով որպես՝

1. պատվիրատուի անուն՝ ..... *ես Մամխաթուն դուստր Խաչերեսին Լառեցո, .... շինեցի զբուրջս յիշատակ ինձ առ Քրիստոս* [Դ. 1, ՈԿԸ, 3],
2. արձանագրություն կազմողի անուն՝ *Յուսէփ Գրիչ* [Դ. 1, ՉԲԴ, 6],
3. նվիրատուի անուն՝ .... *ես Ստուածայտուր էգնեցի զԼուսէրին զայգին .... ընծայեցի ար Ածածինս* [Դ. 6, 1291, 131],
4. եկեղեցու աշխատավորի անուն՝ *Աբուսէդ սուրբ եկեղեցոյս աշխատավոր* [Դ. 2, 15-րդ դ., 67],
5. հանգուցյալի անուն, որ գերազանցապես հանդիպում է տապանագրերում՝ *Լույսն և զԿիրակոս յիշեցեք* [Դ. 6, 19],
6. պատարագ ստացողի անուն՝ *Ի տունի ար Առաքելոյն Թադէոսի :Բ: սեղանի պատարագ Հովասափ վարդապետին և Սերոբին* [Դ. 6, 81]:

#### **1.1. Միայնակ գործածված անձնանունները Արձանագրություններում**

Անձնանունները գրեթե առանց բացառության հանդիպում են բոլոր Արձանագրություններում, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու միջնադարյան հայ մարդկանց սոցիալական տարբեր շերտերի տրամադրությունների, նրանց փոխադարձ հարաբերությունների մասին: «Միայն վիմագրական տվյալների շնորհիվ հաջողվել է պարզել այն հետաքրքրական փաստը, որ XI դարում և դրանից հետո հայ ազնվականության ներկայացուցիչները, ունենալով սեփական մկրտության անունները, սիրում էին կենցաղում կրել մուսուլմանական, մեծ մասամբ արաբական անուններ: Մինչդեռ ցածր խավերի ներկայացուցիչներին վերաբերող արձանագրությունների մեջ երևան են գալիս, սովորաբար միայն տումարական քրիստոնեական անուններ, իսկ վերջին շրջանում միայն սիրված ժողովրդական անուններ» [6, 6]: Անձնանունների կիրառության սոցիալական շերտերի այս տարբերությունը հասկանալի կլինի, «եթե նկատի ունենանք ազնվականության ձգտումը ամեն ինչի օտարը, իսկ ստորին խավերինը՝ դեպի հայրենին (լինի դա լեզուն, տների արտաքին հարդարանքը կամ կահկարասին)» [6, 6]: Օրինակ՝ Անիի տարածաշրջանի արձանագրություններում *Պտուղը* հիշատակվում է որպես գրիչի անուն,

իսկ անհա *Ապլղարիպը*՝ որպես մարգպանի, ինչպես՝ *Պտուղ գրիչ* [Դ. 1, ԶԿԹ, 27] հմմտ..... *ես Ապլղարիպ մարգպան* .... [Դ. 1, 44]

Արձանագրություններում՝ տարբեր առիթներով հանդիպում են նաև օտարագրի ներկայացուցիչների անուններ, ինչպես՝ *Ես թագուր Խերան Սուլթան կանգնեցի իսաչս փրկութիւն հոգւոյն մերում*. [Դ. 2, ԶԽԳ, 120], .... *Սիրկանց այգին գինն Բուրղա թուրքին պարտքն տվին* [Դ., 3, 1367, 145], .... *ի թագաւորութեանն Փատլոնոյ* .... [Դ. 1, ՈԹ, 2]: Վերջին հիշատակության մեջ *Փատլուն*-ը թագավորի՝ թուրքական արական անհայտ ծագման անուն է [3, 193]:

Արձանագրություններում հիշատակված մի շարք անձնանուններ աշխարհագրական սահմանափակություն չունեն. հանդիպում են քննվող գրեթե բոլոր տարածաշրջանների Արձանագրություններում: Այդպիսի անձնանուններ են՝ *Աբրահամ* [Դ. 4, 383], *Գրիգոր* [Դ. 5, 1217, 27], *Հովան* [Դ. 4, 1546, 180], *Հասան* [Դ. 6, 1197, 65] և այլն: Ասվածին հակառակ՝ որոշ անձնանուններ բնորոշ են միայն որևէ տարածաշրջանի: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Գորիսի, Ղափանի և Սիսիանի շրջաններին բնորոշ անձնանուններ՝ ա) արական՝ *Աբուսեդ* [Դ. 2, 67], *Ալանկիր* [Դ. 2, 107], *Ալն* [Դ. 2, 22Է, 82], *Աուր* [Դ. 2, ԶԼԲ, 136], *Ելամ* [Դ. 2, ԶԼԲ, 136], բ) իգական՝ *Գինեկ* [Դ. 2, ՊԿԷ, 118], *Շահիլ* [Դ. 2, ԶՕ, 103] և այլն,

2. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններին բնորոշ անձնանուններ՝ ա) արական՝ *Բոլիկ* [Դ. 3, 16], *Ինանիկ* [Դ. 3, 1346, 56], *Թաճեր* [Դ. 3, 14-րդ դ., 98], *Խուշիթ* [Դ. 3, 1291, 172], *Թրինց* [Դ. 3, 181], բ) իգական՝ *Աժգուն* [Դ. 3, 1471, 185], *Գլխաթուն* [Դ. 3, ԶԿԶ, 68], *Ղոփ* [Դ. 3, 137] և այլն,

3. Գեղարքունիքի շրջանին բնորոշ անձնանուններ՝ ա) արական՝ *Ապայէ* [Դ. 4, 382], *Ասուկան* [Դ. 4, 272], *Ասլեր* [Դ. 4, 13-րդ դ., 317], *Բալաք* [Դ. 4, 1486, 137], *Գավիաք* [Դ. 4, 16-րդ դ., 347], *Էվատ* [Դ. 4, 1547, 329], բ) իգական՝ *Լիտիկ* [Դ. 4, 13-րդ, 317], *Ջալր* [Դ. 4, 1577, 274] և այլն:

Առանձին շարք են կազմում այն անձնանունները, որոնց մի մասին վերձանողները անդրադարձել են որպես նորահայտ կազմությունների, որոնք տեղ չեն գտել Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանում»: Դրանք մեծաթիվ են հատկապես Վայոց ձորի արձանագրություններում, ինչպես՝ *Ջառնամ* [Դ. 6, 84], *Ամիգատ* [Դ. 6, 1273 դ., 215], *Աշուն* [Դ. 6, 43], *Բազազ* [Դ. 6, 12-րդ դ., 159], *Բանտան / Բանուան* [Դ. 6, 13-րդ դ., 172], *Բիսուս* [Դ. 6, 1267 դ., 211-212], *Գժուս* [Դ. 6, 181], *Գորեսեր* [Դ. 6, 221-222], *Երանջան* [Դ. 6, 13-րդ դ., 190], *Խարտեշիկ* [Դ. 6, 13-րդ դ., 172], *Սիթար* [Դ. 6, 13-րդ դ., 177], *Շաստուժ* [Դ. 6, 221-222], *Սիթինա* [Դ. 6, 222], *Վաշ* [Դ. 6, 182], *Վաշըմբեր* [Դ. 6, 32], *Աղեկայձորս* [Դ. 6, 30-31], *Նուրնոր* [Դ. 6, 13-րդ, 50]:

Առանձնացնում ենք նաև *Լոյս* անձնանունը, որում տեղի է ունեցել սեռային վերագրելիության փոփոխություն: Բերենք բնագիրն ամբողջությամբ՝

**ՏԻՐԱՄԱՅՐՆ ԼՈՅՍՆ ԵՒ ԶԿԻՐԱԿՈՍ ՅԻՇԵՑՑԷՔԻ:**

[Դ. 6, 19]

Ըստ վերձանողների՝ *Լոյս*-ը իգական անձնանուն է, որը հասկացվում է *տիրամայր* լրացումից, մինչդեռ ըստ Հ. Աճառյանի՝ այն հայերեն *լոյս* բառից առաջացած արական անուն է [1, 435]: Սակայն բերվածում կարելի է դիտարկել նաև *լոյս Տիրամայր* իմաստը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ունենք *Տիրամայր* վկայված իգանուն [3, 155]:

Դիտարկելով քննվող բառերը՝ պարզ է դառնում, որ Արձանագրություններում անձնա-

<sup>1</sup> Վերձանողը ենթադրում է. «թերևս առաջացած լինի *զիժ* կամ *զուժ* բառերից» [Դ. 6, 13-րդ դ., 181]:

նունները կազմությամբ երկու տեսակ են՝ պարզ և բաղադրյալ: Պարզ են՝ *Աշուն, Վաշ, Բիսուն, Բազազ* և այլն: Բաղադրյալ անձնանունները արտահայտվում են հետևյալ մասնակաղապարներով.

1. «Արմատ + արմատ», ինչպես՝ **Նուրնոր, Ջառննալ**, որոնցից առաջինը «հավանաբար ծագում է արաբ. *nur-լույս* և հայերեն *նոր* բառերից՝ «նոր լույս» նշանակությամբ [11, 51]: *Ջառննալ* անձնանվան դեպքում կարծում ենք, որ առաջին բաղադրիչը կարող է առաջացած լինել «Գոհար» անձնանվան արաբական «Չուհար» ձևից, որը վկայված է նաև «Ջար» և «Ջօր» ձևերով, որի **ր** ձայնորդը բառաբարդման ժամանակ **ն** ռնգայինից առաջ կարող էր դառնալ **ռ**: Իսկ երկրորդ բաղադրիչը հավանաբար իրանական **nām** բառն է, որ նշանակում է «անուն» [13, 202, 363]:

2. «Արմատ + ա հոդակապ + (յ) + արմատ», ինչպես՝ **Աղեկպաճորա** անձնանունը, որը վիմագրերում հաճախ է հանդիպում և վկայված չէ Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանում»:

3. «Արմատ + ընդ նախդիր + արմատ». վկայված է **Վաշըմբեր** անձնանունը, որի *ըմբեր* բաղադրիչը, ինչպես արձանագրության վերծանողն է նշում, «կարող էր ծագել *ընդ* նախդիրից և *բեր* արմատից և նշանակել, ինչ որ մեկի բերած կամ տված, ըստ այդմ Վաշըմբեր կարելի է հասկանալ, Վաշի բերած կամ տված» [11, 31-36]: Ասվածին համակարծիք լինելով՝ առանձնացնում ենք նաև վերոնշյալ մասնակաղապարը: Նշված մասնակաղապարով են արտահայտվել նաև *Գորգըմբեր* և *Վարդըմբեր* անձնանունները:

4. «Արմատ + ածանց», որը ձևավորվում է *-իկ* նվազափաղաքական ածանցի միջոցով՝ **Խարտեշիկ**:

## 1.2. «Անձնանուն + ուղեկցող բառ» կաղապարով կապակցությունները Արձանագրություններում

Արձանագրություններում անձնանունները ոչ միայն միայնակ են կիրառվում, այլև ուղեկցող բառերի հետ<sup>2</sup>, որոնք ցույց են տալիս անձի կամ անձերի՝

▪ ազգակցություն [4, 187-189]՝ արտահայտված դուստր, որդի, արեղա բառերով: Օրինակ՝ *....ես Պէնա, որդի Սմբատա, թոռն Լիպարտի* [Դ. 3, 1348, 81], *Ես Բայստիարի որդի Սարսի խանս* [Դ. 3, 1348, 109], *Խոշին, դուստր Դոփենց Վարհամին* [Դ. 3, 1333, 110], *Միսիթար որդի Սարքիսի* [Դ. 3, 1289, 24], *Ես Ովանէս արեղէս կանգնեցի խաչս* [Դ. 3, 1543, 194], *Այս է հանգիստ Ջարհապին, որ է որդի Փիրիբէկին, եղբար պարոն Մեհրապին* [Դ. 3, 1556, 31], *.... էս Գոնցէ ամուսին Վարհամայ, որդոյ Շահռունեցոյ, դուստր Խոստրովկա յազգէ Տարսայիձանց* [Դ. 3, 1346, 56], *.... էս Ջումէս, թոռն Հասանայ, որդի Հաչո էս կողակիցն Խոանդզէն* [Դ. 3, 14-րդ դ., 80], *Ես Մամբան դուստր Հասանա* [Դ. 3, 1318, 56], *Ես Սարգիս Օղէնց....* [Դ. 1, 3],

▪ աստիճան, տիտղոս, պաշտոն՝ արտահայտված *մելիք, հեջուր, ամիր սպասալար, իշխանաց իշխան, քահանա, վարդապետ, երեց, տէր, արքեպիսկոպոս, ծառա, մարզպան, աղա, խաթուն, պարոն* բառերով, ինչպես՝ **Մելիք Աւան** [Դ. 5, 16-րդ դ., 161], *.... հեջուր ամիր սպասալար Աւագին* [Դ. 6, 70], *տէր Փանթաձաղին* [Դ. 3, 1348, 81], *Ես Տարսաիձ իշխանաց իշխան....* [Դ. 3, 1275, 234], *Սարգիս քահանայ*, [Դ. 3, 1288, 146], *Միսիթար վարդապետս* [Դ. 6, 69], *Աշխէն Գագիկ իրիցոյ եւ քոյր եմբ* [Դ. 3, 1149, 49], *Ես տր Յովանէս Աւրպէլ Միւնեց արհէպիսկոպոս շինող սուրբ եկեղեցոյս յիշել աղաչեմ* [Դ. 3, 1321, 29], *Ես Սեւծի, ծառայ մարզպանա* [Դ. 3, 13-րդ դ., 171], *Ես Աւղլար աղա* [Դ. 4, 73], *Ջնարուղա աղին* [Դ. 3, 1297, 71],

<sup>2</sup> Արձանագրություններում անձնանունների և ուղեկցող բառերի քերականական կապակցությունները մանրամասն քննության է ենթարկել Գ. Խաչատրյանը «Անձնանունների և ուղեկցող բառերի կապակցման քերականական կաղապարները Կամենիցի հայկական դատարանի արձանագրություններում (ժգ. դար)» հոդվածում (<https://arar.sci.am/Content/270116/91.pdf>)

Գոհար խաթուն [Դ. 1, 56], Գոնցա խաթուն [Դ. 6, 1260, 82], Խոնդի խաթուն [Դ. 5, 16-րդ դ., 161], պարոն Սուլթանդուլիսի [Դ. 3, 1543, 17],

▪ տեղանվանական ծագում – .... վրաց Լաշաին [Դ. 3, 1220, 123], Ես Մամխաթունս դուստր խաչերեսին Լառեցո .... [Դ. 1, ՈԿԸ, 3]: Տուտե Խաչէնացո .... [Դ. 9, 1184, 110]:

Լեզվական փաստերը վկայում են, որ անձնանունների հետ ուղեկցող բառերը կիրառվում են բավական հաճախ: Հատկապես առանձնանում են ազգակցություն և տիտղոս անվանող ուղեկցող բառերի իմաստային խմբերը: Վերոնշյալից նկատվում է նաև, որ մինևույն վիմագրության մեջ կարող են վկայվել ուղեկցող բառերի նույն իմաստային խմբին պատկանող տարբեր բառեր (*թոռն, որդի, կողակից*): Սակայն կան դեպքեր էլ, որոնցում ուղեկցող բառերը տարբեր իմաստային խմբերից են, ինչպես՝ .... *որդի Տուտե Խաչէնացո* .... [Դ. 9, 1184, 110]:

### 1. 3. Տոհմանունները Արձանագրություններում

Արձանագրություններում վկայված տոհմանունների որոշ հիշատակություններ ծանոթ են դեռևս դասական հայերենից, ինչպես՝ *Արշակունի, Բագրատունի* [Դ. 9, 12-րդ դ., 20] և այլն: Տոհմանունները Արձանագրություններում հիմնականում կիրառվել են անձերի հավաքականություն նշելու համար: Դրանք կազմվել են *-անք, -է/ենք, -ոնք* վերջավորություններով, ինչպես՝ .... *Սկանդարանց հողն գնեցի* [Դ. 6, 1206, 24] .... *Վասուրանց հողն* .... [Դ. 1241, 13], .... *ես Գրիգոր թոռն Խաչէնիսեց* .... [Դ. 6, 1293, 203], .... *գնեցի եշո քարոյ զՇառեկն և Մարգարտա այգին* [Դ. 6, 1312, 239], *Փշոնց այգին* .... [Դ. 6, 26]: Վերջինս անձանոթ է հայ մատենագրությանը և ըստ վերծանողի՝ «կարող էր առաջանալ *եանք, եանց-ենք, ենց* վերջավորությունները առնմանության ազդեցությամբ *ոնք, ոնց* փոխակերպելով (Հմմտ. այլ բնագրերում՝ Աշոտոնք, Տորոզոնք, Թորոսոնք)» [11, 26]:

### 2. Տեղանունները Արձանագրություններում

Տեղանունները հանդիպում են շինարարական, հիշատակագրային և նվիրատվական բնույթի Արձանագրություններում, որոնցից առաջինում հիմնականում հիշատակվում են որպես խաչքարերի, եկեղեցիների, վանքերի, մատուռների անվանումներ, ինչպես՝ .... *շինեաց Իւանէ գվանքս Մորո ձորո* [Դ. 6, 1197, 135], *Ստեփաննոս պատանին շինեց զԱրատես* [Դ. 3, 1303, 130]: Շինարարական բնույթի արձանագրությունները սովորաբար տեղեկություններ են հաղորդում տվյալ տեղանքում կառուցված կամ նորոգված շինության վերաբերյալ: Դրանով պայմանավորված՝ այս բնույթի արձանագրություններում հազվադեպ են վկայված գյուղերի, քաղաքների կամ այլ բնակավայրերի անվանումներ, որոնցից են Լոռու և Գեղարքունիքի տարածաշրջանների հետևյալ հիշատակությունները՝ *Ես՝ Գրիգոր, որդի Մարծպանայ, յետ մահուան հար իմո, շինեցի զԳրիգորաշէնս եւ էտու յիմ վանքս եւ զՍէրեկագոմոց տափն, եւ զմեծ կոռավարն յագաղակն, զՓայտաշինու կէսն, զավագ Մր նշանն, աւետարան, պատուական գրեան եւ զարդ էկեղեցո եւ այլ արդիւնք ի գաւիթս* [Դ. 9, 1241, 373]: .... *եկինք Գաւառն, շինեցինք Արծիաքարս, կապեցինք կարմուռջ. կանկնեցի յաչս* [Դ. 4, 1544, 108]:

Արձանագրություններում տեղանունները հիշատակվել են նաև տվյալ հոգևոր կենտրոնին նվիրաբերվող առարկայի կամ տարածքի՝ որևէ (նույն/տարբեր) բնակավայրին պատկանելու հանգամանքը ընդգծելու նպատակով, ինչպես՝ «... *ես Վարդան կրանավոր շինեցի Քարհատին ջարդաց եւ էտու սբ Առաքելոյս*» [Դ. 2, 20] հիշատակության մեջ հասկանալի է դառնում, որ կառուցողական վիմագրերը տեղեկություններ են հաղորդում նաև նվիրատվությունների մասին:

Հիշատակագրային Արձանագրություններում տեղանունների վկայվածության տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում զբերգմանոցների խաչարձանների և տապանաքարերի հիշատակությունները, որոնցում տեղեկատվությունը խիստ համառոտ է.

դրանք նպատակ են հետապնդում մատնանշելու հանգուցյալներին կամ խաչքար կերտողներին: Մակայն վերջիններից բացի՝ հազվադեպ հանդիպում են նաև տեղանուններ, որոնք արձանագրվում են հանգուցյալների որտեղացի լինելու հանգամանքը հիշատակելու նպատակով, որը, ինչպես նշեցինք, հաճախադեպ երևույթ չէ, օրինակ՝ *Աւագն է Տէրն Եղիվարդա* [Դ. 9, 1434, 67]: Վերջինս վկայվել է Լոռու Թումանյանի տարածաշրջանի տապանագրերից մեկի վրա:

Տեղանունների ճնշող մեծամասնությունը հիշատակված է նվիրատվական Արձանագրություններում. վկայվել են այն վայրերի անունները, որոնք նվիրաբերվել կամ գնվել են: Դրանք Արձանագրություններում հիշատակվել են որպես այգու, բնակավայրերի, հողատարածքների, հանդի և այլնի անուններ: Բերենք օրինակներ՝ .... *Ետու զԹեղրկա այգին* [Դ. 5, 1216, 114], *Ես Աթանաս որ զԳոզին երկիրն գնեցի ի Հատոց Պտուկ տվի* .... [Դ. 12-րդ դ., 33], .... *ես Ազատշահս, միաբանեցա վանիցս եւ ետու զՕովաստեղացն հողն* [Դ. 9, 404], .... *տվաք ի Սանահինս ի Օաղերոյն Շտարարեանք ամեն շահով մին արաւարս հող* [հանդամաս, Դ. 9, 1221, 61]:

Որոշ Արձանագրություններում նշվում են անուններ, որոնք լրացուցիչ քննության կարիք ունեն՝ *Ես Սեւադա տվի զԲինապատառ նշխարացու. վասն հոգոյ Թաճերին* [Դ. 5, 1364, 226], .... *եւ տվի զՎաղադին զՆշահորին զգումեր* և *զԿիրողի վանս ազատ ի մեր յամեն յարկէ* [Դ. 2, 22Ե, 101], .... *ինձ կատարի պատարագ զամեն եկեղեցիքս. որ և տվի զմեր յաս հողն զԳրի հանդի զԼենեկյան :Ա: բահի ջուր* [Դ. 5, 129]:

### 3. Տոնանունները Արձանագրություններում

Արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վանքերի կամ եկեղեցիների օգտին կատարվող նվիրատվությունների դիմաց նվիրատուներին կամ այլ անձանց եկեղեցական որևէ տոնի ժամանակ պատարագ էին խոստանում՝ .... *գնեցի զսբ Նշանս և զճեղացս ակն տվի ի վանքս տրս և միաբանքս խոստացան ի տարումն :Բ: ժամ Առաքելոց տաւնին* [Դ. 5, 1293, 16], *Ես Բզնատիոս միաբանեցա սբ ուխտիս սքա տվին :Ա: պատարագ ՍԲ Գեորգա տաւնին* [Դ. 5, 13-14-րդ դդ., 62]:

Տոնանունները առավել հաճախ վկայված են նվիրատվական արձանագրություններում, ընդ որում՝ վկայված են տարբեր տոնանուններ: Նշենք դրանցից մի քանիսը նույնպես՝ .... *Յովանու տաւնին* [Դ. 5, 1272, 16], .... *ի տաւնի սրբոյն Սանդիստո* [Դ. 9, 1240, 59], .... *Փիլիպոս առաքելո տաւնի* [Դ. 9, 13-րդ դ., 63] և այլն:

Տոնանունների ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև, որ պատարագը տվյալ նվիրատուի ցանկությամբ պիտի մատուցվեր սկզբում ծնողների հիշատակին, իսկ իր մահից հետո՝ իր, ինչպես՝ *Ես Առղար աղա տւի զիմ Ոսկէդին ի սբ Ստեփանոսս եւ միաբանքս տւին :Զ: ար ժամ ի տաւնի սբ Խաչին. որչափ կենդանի եմ վարդապետիս անեն, և յետ մահու :Դ: ինձ, :Դ: նրա* [Դ. 4, 73], .... *միաբանքս :Գ: ար ժամ տվին Յայտուրթեան տն մերոյ ՔԲ. որչափ ես կենդանի եմ իմ մարն առնեն եւ յետ անցման ինձ առնեն* [Դ. 5, 13-րդ դ., 16]: .... *եկի մեծ յուսով ի սբ ուխտս Գանձասարա ես եւ որդի իմ Վախտանգ եւ սքա խոստացան ժամ զՎարդաւաղտին տաւնին զամեն եկեղեցիքս պատարագն քանի ես կենդանի եմ զժամն իմ հարն եւ իմ մարն կատարեն եւ յետ իմ փոխման ինձ կատարեն* [Դ. 5, 1280, 41]:

### Եզրակացություն

12-16-րդ դարերի հայերեն վիճակի արձանագրությունների բառապաշարը բազմաշերտ է: Դրանք արտահայտության և բովանդակության պլաններում բնորոշվում են մի շարք առանձնահատկություններով:

Նշված ժամանակահատվածի արձանագրությունների բառապաշարից անդրադարձել ենք միայն գոյականների որոշ իմաստային խմբերի, որոնց քննությունից պարզ է դառնում, որ դրանցից.

1. անձնանունները Արձանագրություններում վկայվել են տարբեր առիթներով՝ որպես պատվիրատուի, արձանագրության կազմողի, նվիրատվություն կատարողի, եկեղեցու աշխատավորի կամ պաշտոնյայի, հանգուցյալի անուններ: Անձանունների կիրառությունները հաճախ հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու սոցիալական տարբեր շերտերի ու նրանց փոխադարձ հարաբերությունների մասին: Տարբեր առիթներով հայերեն արձանագրություններում հիշատակվում են նաև օտարազգիների անուններ:

2. Արձանագրություններում վերծանողների կողմից առանձնացվել են նորահայտ անձնանուններ, որոնք կազմությամբ լինում են պարզ և բաղադրյալ: Վերջիններս արտահայտվել են «արմատ + արմատ», «արմատ + ա հոդակապ + (յ) + արմատ», «արմատ + ընդ նախդիր + արմատ», «արմատ + ածանց» մասնակաղապարներով:

3. Անձնանունները կիրառվում են նաև ազգակցություն, տիտղոս, աստիճան, պաշտոն, տեղանվանական ծագում ցույց տվող ուղեկցող բառերի հետ, որոնցից բավական հաճախադեպ են առաջին երկուսը:

4. Տոհմանունները Արձանագրություններում կազմողների կողմից հիմնականում կիրառվել են տվյալ կառույցի, աշխարհագրական տարածքի (և այլնի) որևէ անձի պատկանելու հանգամանքը կամ արձանագրության մեջ հիշատակվողի սերումը, ծագումը ընդգծելու համար: Դրանք, ի տարբերություն անձնանունների, հաճախադեպ չեն:

5. Տեղանունները հիշատակված են շինարարական, նվիրատվական և հիշատակագրային բնույթի Արձանագրություններում: Դրանցից առաջինում հազվադեպ վկայված են գյուղերի, քաղաքների կամ այլ բնակավայրերի անվանումներ: Տեղանունների ճշող մեծամասնությունը հիշատակված է նվիրատվական բնույթի Արձանագրություններում: Հիշատակագրային Արձանագրություններում տեղանուններ նշվում են հանգուցյալների որտեղացի լինելու հանգամանքը հիշատակելու համար:

6. Տոնանունները Արձանագրություններում հիշատակվում են որևէ անձի համար որևէ տոնի ժամանակ պատարագ մատուցելու նպատակով: Դրանք կատարվում էին և՛ կենդանի, և՛ մահկանացուն կնքած մարդկանց համար:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-41>

### Գրականություն

1. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1944, Հատոր 2, էջ 634:
2. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1948, Հատոր 4, էջ 686:
3. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1962, Հատոր 5, էջ 383:
4. Ավետիսյան Տ., Հայկական ազգանուն, Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987, 322 էջ:
5. Խաչատրյան Գ., Աձնանունների և ուղեկցող բառերի կապակցման քերականական կաղապարները Կամենիցի հայկական դատարանի արձանագրություններում (ժգ. դար): Էջմիածին: Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի: 2021: Հատոր ՀԸ: Համար Ա: Էջ 91-105 (<https://arar.sci.am/Content/270116/91.pdf>)
6. Դիվան հայ վիմագրության, Անի (Գլխ. խմբ.՝ Հ. Օրբելի, հատորի խմբ. Բ. Առաքելյան), Երևան, ՀՄՄԻ ԳԱ հրատարակչություն, 1965, պրակ 1, էջ 177:
7. Դիվան հայ վիմագրության, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ (Գլխ. խմբ.՝ Հ. Օրբելի, հատորի խմբ. Բ. Առաքելյան), Երևան, ՀՄՄԻ ԳԱ հրատարակչություն, 1960, պրակ 2, էջ 242:

8. Դիվան հայ վիմագրության, Վայոց Ձոր, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1967: պրակ 3, էջ 430:
9. Դիվան հայ վիմագրության, Գեղարքունիք (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1973, պրակ 4, էջ 530:
10. Դիվան հայ վիմագրության, Արցախ (Կազմ.՝ Ս. Բարխուդարյան): Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982, պրակ 5, էջ 348:
11. Դիվան հայ վիմագրության. Իջևանի շրջան (Կազմ.՝ Ավագյան Ս., Ջանփոլադյան Հ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977, պրակ 6, էջ 333:
12. Դիվան հայ վիմագրության, Լոռու մարզ (Կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սարգսյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012, պրակ 9, էջ 612:
13. Martirosyan H., Iranian personal names in Armenian collateral tradition. (ed. by Rüdiger Schmitt, Heiner Eichner, Bert G. Fragner, and Velizar Sadovski). Vienna: Austrian Academy of Sciences Press, 2021.

### **Некоторые семантические группы существительных армянских эпиграфических надписей XII–XVI вв.**

*Շոպուրյա Գայե*

#### **Резюме**

**Ключевые слова.** антропоним, родовое имя, топоним, сопровождающие слова, частотность, словообразовательная модель

Создание серии сборников «Свод армянских эпиграфических надписей» значительно способствовало развитию эпиграфики. Представленные в них материалы являются важными и основополагающими для синхронного и диахронного изучения явлений в рамках таких дисциплин, как этнография, историография, лингвистика и др. В данной статье рассматриваются лишь некоторые семантические группы существительных в лексике армянских эпиграфических надписей XII–XVI вв. (антропонимы, родовые имена, топонимы, названия праздников). В этих надписях зафиксирован ряд новых слов, изучение которых представляет интерес с точки зрения всестороннего исследования лексики среднеармянского языка. В статье сделаны выводы, вытекающие из содержания исследуемого материала. Среди семантических групп существительных особое внимание уделяется антропонимам, встречающимся как самостоятельно, так и в сочетании с сопровождающими словами. Последние чаще всего обозначают титулы и звания. Некоторые личные имена рассматриваются как новые и требуют дополнительного изучения. Родовые имена встречаются в конструкциях, где необходимо указать происхождение (род или нацию) лица, совершающего сделку – покупателя или дарителя. Топонимы не ограничены в употреблении и варьируются в зависимости от содержания надписей, однако наиболее часто они встречаются в дарственных и строительных надписях. Названия праздников выделяются среди указанных групп тем, что упоминаются преимущественно в связи с пожертвованиями, сделанными в пользу монастырей или церквей, – в частности, с целью совершения литургии в память о дарителях или их родственниках во время определённого церковного праздника.

## Some Semantic Groups of Nouns in Armenian lithographic inscriptions of the 12<sup>th</sup>-16<sup>th</sup> centuries

*Chopuryan Gayane*

### Summary

**Key words:** *anthroponym, generic name, toponym, accompanying words, frequency, word-formation model*

The creation of the multi-volume series *Corpus of Armenian Epigraphic Inscriptions* has significantly contributed to the development of epigraphy. The materials presented in these volumes are essential and foundational for the synchronic and diachronic study of phenomena within disciplines such as ethnography, historiography, linguistics, and others. This article examines only several semantic groups of nouns found in the vocabulary of Armenian epigraphic inscriptions of the 12<sup>th</sup>-16<sup>th</sup> centuries (anthroponyms, family names, toponyms, and names of holidays). These inscriptions contain a number of new words whose study is of interest for a comprehensive investigation of the lexicon of the Middle Armenian language. The article presents conclusions derived from the examined material. Among the semantic groups of nouns attested in the 12<sup>th</sup>-16<sup>th</sup> centuries, anthroponyms are used both single and with accompanying words. Among the latter, those indicating title and rank are especially common. Some personal names are considered as new and need additional research. Generic names occur in constructions where it is necessary to indicate the origin of the person performing the transaction: the buyer or the donor. Toponyms have no restrictions regarding the contents of inscriptions, but they are most often found in donation and construction inscriptions. Holiday names are distinguished from the above-mentioned semantic groups by the fact that they are mainly mentioned in exchange for donations made to monasteries or churches in order to perform a liturgy in memory of them or their relatives.

Ներկայացվել է 15. 04. 2025 թ.  
Գրախոսվել է 21. 05. 2025 թ.  
Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.